

## Հաշվարկելի շահութաբերությունը

Դրամական հոսքերի կանխատեսումից հետո արվում է շահութաբերության հաշվարկ, կամ այլ կերպ ասած, փորձում հաշվել, թե որքանով է տվյալ ձեռնարկը եկամտաբեր ներդրման հետ համեմատության մեջ: Նախքան եկամտաբերության հաշվարկի բաղադրիչներին անդրադառնալը, նշենք որ այն կազմվում է կամ ամսական կամ տարեկան կտրվածքով, հետևաբար և հասույթներն ու ծախսերը նույնպես տարեկան/ամսական կտրվածքով է տրվում:

Այժմ անդրադառնանք եկամտաբերության հաշվարկի յուրաքանչյուր բաղադրիչին.

- **Իրացում** – Մատուցված ծառայության իրացումից հասույթն է՝ շրջանառությունը:
- **Շրջհարկ, արտոնագրային վճար** – սպառողական կոռպերատիվը գործում է եկամտային հարկման դաշտում, քանի որ նրանց կողմից մատուցված ծառայություններից ստացված գումարը ուղղորդվում է կազմակերպությունների կանոնադրական նպատակների իրականացմանը:
- **Իրացումից գուտ հասույթ** - հավասար է ամբողջ իրացումից հանած հարկերը:
- **Աշխատավարձի ուղղակի ծախսեր** - բոլոր աշխատավարձերի գումարը հաշված տարեկան/ամսական կտրվածքով:
- **Եկամտային հարկ** – 2018թ.-ի հունվարից փոխվելու են տոկոսադրույքները աշխատավարձերի, որոնք կարգավորվում են օրենքով:
- **Ուղղակի նյութական ծախսումներ** - հումքի տրված գումարը (ամսական կամ տարեկան):
- **Ուղղակի արտադրական այլ ծախսումներ** - ներառում է ամորտիզացիան՝ հիմնական միջոցների մաշվածությունը վերոնշյալ ժամանակահատվածում:
- **Անուղղակի արտադրական ծախսումներ** - այն ծախսերն են, որոնք կատարման կամ հաշվարկման պահին հնարավոր չէ որոշել, թե այդ ծախսումների որ մասը որ արտադրատեսակին և/կամ ծառայությանն են վերաբերում: Այդպիսի ծախսումներ են ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի աշխատավարձը, դրանց սոցապ հատկացումները, արտադրական նշանակության հիմնական միջոցների մաշվածությունը, նորոգման և սպասարկման ծախսումները:
- **Իրացումից ստացված համախառն եկամուտ** - այստեղ ներառված է հասույթից հանած բոլոր ծախսերը բացի իրացման, վարչարարական և նախագործառնական ծախսերից:
- **Իրացման ծախսեր** - այն ծախսերն են, որոնք վերաբերում են բացառապես վաճառքին՝ ծառայության հանրայնացմանը, մարքեթինգային կամ PR ծախսերին:
- **Վարչարարական ծախսեր** - ադմինիստրացիոն (գրասենյակային) ծախսերն են՝ սկսած գրենական պիտույքներից, վերջացրած՝ տնօրենի աշխատավարձով:
- **Նախագործառնական ծախսեր** - նախագործառնական են կոչվում այն ծախսերը, որոնք կատարում է կազմակերպությունը (անհատը) մինչև գործը սկսելը:
- վերջին երկու կետերը այլ գործունեությունից **շահույթ/վնաս**, վերաբերում է հիմնականում այն ձեռնարկություններին, որոնք բացի վերոնշյալ ծախսերը՝ նաև այլ ծախսեր ունեն՝ ձեռնարկությանը չառնչվող, բայց, այսպես կոչված, կոնկրետ

Ֆինանսական միջոցների վրա ազդող թվային տարբերակով ներառված: Այդ իսկ պատճառով մեզ մոտ «Հիմնական գործունեությունից եկամուտ/վնաս» համընկնում է «Շահույթ մինչև հարկումը» բաժնի հետ:

- **Զուտ շահույթ/ վնասի** հետ՝ սա էլ վերոնշյալի հետ է համընկնում՝ «Շահույթը մինչև հարկումը»:

**Հավելում.** գուտ շահույթ/ վնասով նաև հնարավոր է հասկանալ, արդյո՞ք արժե շարունակել, կամ ընդհանրապես սկսել տվյալ գործունեությունը, թե ոչ և եթե այո, ապա ինչ ռիսկեր կան, որոնք հարկավոր է ի սկզբանե հաշվի առնել և կառավարել դրանք: